



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

Ի ՅՈՒԼԻՍ 1900

(ԹԻԻ 8)



ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կօճկին մղձաւանջը, Երուանդ Սրմայրէշխանլեան. — Էղձանքը (Կերթուած),
Գամեր-Արշաւիր. — Գիտական տարագանգ (Դ-Երբ), Յ. Ս. Փափազեան. —
Հայաստանէն լուրեր. — Մուրացիկ Էման (Ղարանբեկի յեղատէս), Գրիգոր Մօզ-
եան. — Սիրոյ գոհեր, Տիգրան Աճէմեան. — Կիսամտեակ:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՊՊ Շ Ա Ի Ի Ղ ՊՊ

Կը հրատարակուի ումէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուլկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Ամերիկայի » » 2 1/2 սուլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Բաժնեգին, նամակ, յօդուած, լրագիր և գիրք՝ պէտք է
ուղղուին հետեւեալ հասցէին՝

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շարիդի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ՅՈՒԼԻՍ 1900

Թիւ 8

ԿՐՕՆՔԻ ՄՂՁԱԽԱՆՋԸ

Արեւելքի քրիստոնեաները, ընդհանրապէս հայերը Յիսուսի - Քրիստոսի ճշմարիտ եկեղեցիին գողը, այսինքն կաթողիկոսեան դարձնելու մեծ գործին վարիչ հայր Շարմիսն, ամէն ժամանակէ աւելի եռանդնաբար վիճակի մէջ կը գտնուի: Փրանսայի ստանէն պաղատանքի սրտաշարժ կոչեր կուղղէ կաթողիկեաներուն, որպէս զի ասոնք նիւթական շուտափայթ օգնութիւններ հասցնեն իրեն՝ ներկայ հիանալի առիթէն օգտուելով հայերը ամբողջովին փրկելու համար . . . հոգեւորապէս: Հայաստանի այն տեղերուն մէջ ուր սոջն ու կեղեքումը արտասովոր սաստկութեան մը հասած են, հարկ անհրաժեշտ կայ կաթողիկեկեղեցի-գպրոցներ կառուցանել՝ հայր Շարմիսնի կարծիքով:

Եւ անպատու չեն մնար անխոնջ

և անվհատ կրօնաւորին աղերսանքի աղէկաուր ծիջերը. շատեր հարկ եղած գումարները արամադքերու պատրաստակամութիւն կը յայտնեն, նայնիսկ Պելժիացի հարուստ տիկին մը 40,000 ֆրանքնոց չէք մը կը զրկէ հայր Շարմիսնի՝ 40 գիւղերու փրկութեան համար: Բաթերան, այս արգիւնքէն ցնցուած, սա աողերը կը դժէ իր բրորականութիւն թերթին մէջ:

Ոգորմասիրութեան այս սքանչելի շարժման առջեւ՝ սիրտս կերգէ երախտագիտութեան ովսաննան եւ պէտք կըզայ փառք տալու Աստուծոյ եւ մեր բարեգործներուն, վասն զի այսօր համոզուած եմ թէ գործը իրականաւր է եւ թէ Աստուած կուզէ ատիկա: Ուրիշ վեհանձն հոգիներ անշուշտ եմ թէ պիտի լայնօրէն եւ ազգուապէս օգնեն մեզ՝ ընդհանրացնելու այս գարձը հայերուն ու նեստրականներուն որոնց երկուքն ալ կը պատկանին այն ամենէն հին երկու հերետիկոսութիւններուն որոնք 1500 տարիէ ի վեր կը հերձուածեն Յիսուսի-Քրիստոսի ճշմարիտ եկեղեցիին գողը:

Մեզ համար անժամօթ է թէ ֆրանսացի ղերապալժաւին՝ հա-

յերը կաթողիկ ընելու ակնկալու թիւնը որ աստիճան իրականալի է, միայն սա ստոյգ է որ հայր Շարմ թան իր կրօնամերտական մեղձատն ջին տենդերուն մէջէն չի կշնար կոր ըմբռնել թէ լուսաւորչական հայու թիւնը 1500 ասարիէ ի վեր կրօնքի համար արիւննալի ճակատամարտներ կը մղէ, ու դարերու ընթացքին մէջ՝ ահեղ յարձակումներու դէմ դնելէ յետոյ, դեռ այսօր իսկ, իր սա ամենէն լքուած ու եղկելի վիճակին մէջ, մինչև յետին շունչը կը տակայ՝ իր պապերուն տւանդ ձգած նուիրական կրօնքէն չբաժնուներու համար:

Ստոյգ է նաեւ որ՝ եթէ հայր Շարմթան եւ իր նմանները ամենապզտիկ խղճահարութիւնը ունենային հասկնալու գիւցաղնական գեղեցկութիւնը ազգի մը այս յամու ու անտեղիտալի գիմադրութեան, որով անիկա իր կրօնքն ու իր լեզուն կը պաշտպանէ, այսօրինակ ծայրայեղ կոպտութեամբ չպիտի իյնային անտէրունջ ու վիրալից ցեղի մը բեկորներուն վրայ, լոկ աւելցնելու համար երկրպագուները եկեղեցիի մը պետին ու եկեղեցիի մը, ուր ամէն սրբութիւն կեղծիքով ու կատակերգութեամբ մը հանդերձաւորուած է:

Բայց ամենէն աւելի ստոյգը սա է որ՝ թուրքին սուրին, քիւրտին տապարին քով՝ բողբաղական, կաթողիկ, օրթոտոքս կրօնքներուն լայ-

նարաց օրկորները կան, լայող կուրդ իլլասի օրկորներ որոնք մեղի կուլ տալու անյաղութեամբ միշտ կը բոցուին ու կը դոցուին մէյմիկ կատր բան տանելով մենէ շարունակ

*
* *

Հակառակ այն համոզմանս թէ Հայաստանի մէջ դործող կաթողիկ բաթերաները իրօք նիւթական դոյզնօգուտ մը կրունենան մեր յժբախտ ազգակիցներուն, առանց սակայն ընդհանուր թշուառութենէն բան մը պակսեցուցած կամ թեթեւցուցած ըլլալու, չեմ կրնար զգուանքի ստրուտ մը զսպել՝ երբ մտածեմ թէ այդ բաթերաներու կազմակերպութիւնը իր փայփայած ձգտումին, իր ծրագրած նպատակին հասնելու համար երբեք չուզեր որ հարստահարութիւնը արմատէն վերնայ այդ երկիրներուն մէջ, ժողովուրդը հանդիսա կեանք վարելու, ինչքի, պատուի ու կրօնքի օրինաւոր սեպահականութիւնը վայելելու բախար ունենայ: Հայաստան, իր տրդիքայքայուած դրութեամբը, բեղմնաւոր գետին մը կրնձայէ կրօնքի սրտորդներուն համար: Որպէս զի հայ մը զիջանի իր հօրենական հաւատքէն հեռանալ, կամ անօթի ըլլալու է և կամ մահուան արհաւիրքին տակ ընկճուած: Այս երկու պայմանները կան այժմ Արարտեսան Աշխարհին մէջ, ուրեմն մեր

հաւատքին թշնամիները հոն են՝
անօթի ու սարսափահար զեղացիին
աչքին առջեւ երևըցնելով հացի
շերտ մը, հանդերձի կտոր մը կամ
սնամէջ խոստում մը . . . յաւիտե-
նական կեանքի :

Հայր Շարմիճան կրնա՞յ երեւա-
կայել գրութիւնը իր գործունեայ
ձեռնասուններուն երբ Հայաստան
բարեկարգուած, սփոփուած և ինք-
նամփոփուած, ժամանակ ունենայ
իր գոյութեան պայմաններուն վրայ
լլջօրէն և հանդարտօրէն խոկարու :
Եթէ մեր հին պատմութիւնը կար-
գացած է, հարկաւ տեղեակ է այն
փառաւոր ընդունելութեան զոր հա-
յերը իրենց երկրին սահմաններուն
վրայ ըրին՝ Պարսից Յազկերտ թա-
գաւորին զրկած կրակապաշտ մոգե-
րուն, ու նաև այն սիրալիր ասպնջա-
կանութեան զոր հայերը ընծայեցին
Տաճարականներուն՝ կիլիկիոյ մէջ,
Միջին Դարուն :

*
* *

Պարսկաստանի մէջ ակներեւ յա-
ջողութիւններ ձեռք կը բերեն մի-
սիոնարները, թշուառութեան յան-
դունգն շահագործութիւններով :
Պարսկաստանի առաքելական պատ-
ուիրակ մինսէնեօս Լէնէ հետեւեալ
կերպով կը տեղեկագրէ իր գոր-
ծունէութեան փառաւոր արդիւնքը .

Լուսաւորչական հայերու տրամադ-
րութիւնները գէպի կաթոլիկութիւն՝
հետզհետէ նպաստաւոր կը դառնան .

վերջերս միսիոնար մը զրկեցի այցե-
լու ինձ . իր դարձին շատ միսթարա-
կան լուրեր տուաւ տեղւոյն քրիստոն-
եաներուն արամազրութեանց վրայ :
Դէպի կաթոլիկութիւն հոսանքը օր
ըստ օրէ աւելի կը շեշտուի, ոչ միայն
Ուրմիոյ մէջ, ուր Աւետիս Շաքօեան
քահանային հաւատափոխութեան օրի-
նակին շատեր հետեւեցան, այլ նաև
Մարաքաի, Սուլտուզի, Սալմաստի,
Խոյի եւ Դաւրէթի մէջ . ամէն տեղէ
միսիոնարներ ու դպրոցներ կուզեն
տղոց կրթութեան համար . «Ինքզինք-
նիս կաթոլիկ հռչակելու համար
ասոնց կապասենք» կ'ըսեն : Սալմաստի
միսիոնարութեան մեծաւորը անցեալ
օր կը գրէր ինծի . «Սալմաստի, Խոյի,
Դաւրէթի հայոց մէջ շեշտուած շար-
ժում մը կայ գէպի կաթոլիկութիւն,
Դաւրէթի շատ ընտանիքներ կուզեն
մերիններէն ըլլալ, եւ հայ կաթոլիկ
քահանայ մը ու դպրոց մը կը խընդ-
րեն . միւսնոյն բանը կրնամ ըսել
Հաֆթվանի, Քէօհնէչէհրի համար .
Մէլհէմէն ալ բազմութիւ տուներ մեզ
միանալ կը փափաքին : Կրնայ ըլլալ որ
բարին Ատուած, վերջերս տեղի ունե-
ցած ողորմութիւններէն եւ Միու-
թեան համար յարաժամ երկինք ուղ-
ղուած անհատնում աղաչանքներէն
զգածուած՝ վերջապէս գթա՛յ յայս մո-
լորուած ազգին !!! :

Դաւրէթի հայոց մասին ուրիշ կող-
մէ կը գրեն . «հայերը անհամբեր միսիո-
նարներուն կապասեն . ա՛լ ոչ իրենց
եպիսկոպոսը կուզեն ոչ իրենց քահա-
նաները . յիսունէ աւելի ընտանիք
խոստացան կաթոլիկ դառնալ, միսիո-
նարներ եւ դպրոց կուզեն իրենց զա-
ւակներուն կրթութեանը համար : Դաւ-
րէթի հաւատափոխութեան վայրկեանը
եկած հասած է . տեղւոյն արքեպիսկո-


պոսը այժմ Սարմատ է. Դաւրէժի բնակիչները իմացուցեր են իրեն որ այլեւս իրենց մօտ չգայ, վասնզի այլեւս պէտք չունին ոչ-կաթովիկ եպիսկոպոսի մը:»

Կրօնքի շովէններու կեղծապարիշտ զթասարաութեան աղմկալից այս ցոյցերը ոչ միայն համակրանքի դոյզն զգացում մը չեն ծնցուներ մեր մէջ և անոնց կողմէ մեր ազգային փրկութեան համար նպատատաւոր ճգտում մը ոչ միայն լիովին անհաւանական կը թուի մեզ, այլ և իրենց ընթացքը կը նկատենք ուղղակի վտանգներէն մէկը մեր գոյութեան, զոր մինչեւ այսօր միմիայն մեր արեան գնովը յաջողած ենք պահպանել. ու ոչ Շարմիսնի մը ռակիներովը, ոչ բախտախնդիր միսիոնարներու Յիսուսի և Աստուծոյ անուամբը ըփրտած չոր ու ցամաք ցնդաբանութիւններովը պիտի շարունակենք մղել գերագոյն մարտը ազգային կեանքերնուս պահպանումին՝ չարագործութեամբ, անիրաւութեամբ և վայրենի քաղաքակրթութեան մը չպարովը յատկանշուած այս տարօրինակ դարուն մէջ:

Կրօնքը մեր գոյութեան մեծագոյն պայմաններէն մէկն է. գումարի և մեղքոս հրաւերներու փոխարէն չենք ի տար զանիկա: Հայր Շարմիսնի և իրենները, ու իր նըմանները պարապ տեղը իրենց սուրբը պիտի փթացունեն մեր հոգին ու միտքը պատուղ զրահին պողպատէ վերտերուն վրայ:

Երուանդ Սեմաֆէլիանցեան

ԸՂԶԱՆԻՔ



Բ.

Մայր-Հայաստանն էր. ալ չի դիմացայ.

— Խնամք պահ, մ'ըսի, վար, հողին վրայ:

Խօսքս չի մերժեց. հրեցակն էր բարի,

Թողուց որ որդին իր մօր փարի:

Երբ որ մօտեցանք, ոգին մեմակեաց

Մեզ նեմարելով Եւրժեցաւ, սարսուաց.

— Ո՛ր օտարականք, ի՞նչ կ'ուզէք, բար.

Թողէ՛ք զիս նանգիս մէջ վեցիս անբար:

Թողէ՛ք որ գոնէ ես լամ անվրդով

Իմ զանակներուս անվերջ Երմաց Բով . . .

Թողէ՛ք արսասուեմ. . . — Ո՛ր մայր, ալ մի՛ լար . . .

Աչերդ սրբէ, . . . ես քեզ չեմ օտար,

Լեռած չես բրնաւ, քեզ չեմ մօտացեր

Քու զաւակներդ. ո՞ր մայր, մ'արսասուեմ . . .

Որքա՛ն ալ հեռի քեզնէ գեմուիք,

Քեզ կը պահպանի բոլոր արիւնցիք.

Մայր, յայտնէ Բու իղձ . . . կուզե՛ս խուռներամ

Հայ զինուորներով հոս վերադառնալ,

Կանգնեցնելու Բու պատկն ու գահ,

Կուռի՛նք գոչելով «Փրկութիւն կամ մահ» . . .

Եւ մեր Բաջուքեան մեծ ու անձնուէր

Վրկայ քող ըլլան այս արիւն ւ՛աւեր . . .

— Մերի՛ն, ո՞ր, արիւն, ա՛յ բաւ այսօր գոն.

Որդուն մահովը մայր մը չ'ըլլար գոն:

— Հապա լ՛նչ կայ, մայր, կեանք գերիվեր .
 Յայտնե՛ որ քերե՛նք քեզի ի նուէր :
 Հայաստան յանկարծ իր շրջաններուն
 Մէջէն վեր առաւ ձեռքը դողողուն .
 Շուրջը ցոյց տուաւ, Եւրոպայով մը գոռ
 Ու քաւա վճռով — Հարցնենք անոր . . .

Ու խրորեցան լեռներ բարձրաբերձ ,
 Մխացոյ սարինք շիրմներու մերձ .
 Եւ ամէն կէտերէ անեղ արձագանգ
 Միսկոյն որոտաց . « Հայեր , միանանք » .
 Տանաւն իր խաչով ու հիւղակըն հեկ
 Հառաչ մ'ունեցան « Հայեր , միացէ՛ք » .

Հեծող հովիկը ու գետեր շէկ ,
 Մըմունջ մ'ունեցան . « Հայեր , միացէ՛ք » .
 « Միացէ՛ք , միացէ՛ք » , ա՛յս է միաբան
 Իղձը տանաւին , շիրմին ու լեռան .
 Կենդանիք , մեռեալ , ոսկերի
 Բիւր հեղ կրկնէին « Հայեր , միացէ՛ք » . . .

Մայրն ինձ դարձաւ , մայսով մը սխուր ,
 — Ահա՛ , քսաւ նա , իղձըն ընդհանուր .
 Ամէն ցանկերէ , արծող բիւր գոներ ,
 Ռդեակ , իմացիք , ա՛յս է գերիվեր .
 Ով որ իր մայրը փրկելու կ'ըզձայ ,
 Սիրքը քոյ քերէ միութեան ընծայ :

*
 * *

Եւ երբ քերեալն վրայ հրեցակիւն ,
 Կր հեռանայի արսով լալագին ,
 Մեզ միտ կ'ուղեկցեր մօր աչք սխրաբեկ
 Յաւէտ կրկնելով . « Հայեր , միացէ՛ք » :

ԳԱՄԵՐ-ԱՐԵՍԱՒԻՐ

ՎԵՐՁ

Վերջով — Նաւորդ թիւի 104րորդ երեւին
 Բ. սիւնակին 15րորդ տողին մէջ « ժանտոխտ »
 բառը կարգող « ժանաատնող » :

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Մ Ո Ւ Կ Ե Ր Ը

Անցեալ անգամ քրօնիկիս նիւ-
 թը ճանճերն էին , այսօր կարգը
 մուկերունն է , գարշելիները :

Մարդ զայլույթով կը լեցուի երբ
 մտածէ թէ կեանքի պայքարին մէջ
 որ մեզ՝ հայերուս համար մանաւանդ
 բազմատեսակ և տաժանելի է , պէտք
 է զբաղիլ նաեւ ճանճերով , մու-
 կերով և ասոնց նման կարգ մը ա-
 ըրարածներով որոնք շունչ առնել
 չեն տար և շարունակ կըսպառ-
 նան . . . :

Ո՛րքան երանելի են եղեր մեր
 պապերը որոնք մանրէին գոյութիւ-
 նը չգիտնալով ամէն մէկ հիւանդու-
 թեան մէյմէկ մեկնութիւն կուտան
 և զանազան զեղեր գործածելով
 կամ կը բժշկուին և կամ կը մեռ-
 նին կերթան եղեր , բայց աւելի կը
 բժշկուին :

Մեր այս ըսածը հաստատելու
 համար արդէն շատ հեռուները եր-
 թալու հարկ ալ չկայ . դեռ քանի
 մը ասոնեակ տարիներ առաջ մի-
 րուպը գիտական աշխարհի ուշադ-
 րութիւնը գրաւած չէր . գիտուն-
 ները երեւոյթներէն կը բացատրէին
 հիւանդութիւնները և զեղերն ալ
 ըստ այնմ կը յանձնարարէին , մինչ
 այսօր հիւանդութիւններէ շատ

միջբոսպի անուն կայ և պէտք եղաւ թէն աւելի դեղ, ամէնքն ալ նոր, սիրուն բայց անտանելի :

Ըսինք արգէն թէ ճանճերը շատ մը հիւանդութիւններու մեղսակիցն են, արդ պէտք է գիտնալ որ մուկերն ալ անոնցմէ վար չեն մնար, մանաւանդ ժանտախտին նկատմամբ :

Հիմա որ այս ազտատ հիւանդութիւնը մեր շուրջը կը դեղերի և որ օրի մօտենալու փորձեր կընէ, աւելորդ չէ անշուշտ անոր տարածուելու միջոցներէն միոյն վրայ ես դարձնել ու շագրութիւննիս և զպուշութիւնները շարունակել :

Մուկերն են այդ միջոցը որոնք ճանճերուն նման աներես, լկտի և վտանգաւոր էակներ են. հինէն ի վեր մտերիմ և հաւատարիմ դաշնակիցները ժանտախտին որ միշտ կը կաշառէ զանոնք, անճնասիրութիւնս նին կը փայփայէ, փորերնին կը կշտացնէ և անոնց դարձ կը հայթայթէ : Հողին տակ, մութ և զրդուելի տեղեր ուրջաւորով կամ գետնին երեսը քիթերնին աստ անդ, ամէն բանի մէջ խոթելով հանելով տեղէ տեղ, ծակերէ անդին, բնակութենէ բնակութիւն կը փոխադրեն կարգ մը մանրէներ որոնց մէջ նշանաւորն է ժանտախտի մանրէն :

Կոյրուղիներու այս անխիղճ բնակիչը այնքան կատէ մարդկութիւնը որ չի քաշուիր իր աղտոտ վիճակին մէջ մինչեւ մեր խոհանոցները մշտնալ և ուտելիքներու շուրջը թա-

փառելով հետը բերած ազտաղութիւնով պղչիկ մեր սաները, անոնց պարունակութիւնները, պնտիները, հացերնիս և ամէն ինչ որ կը դտնէ ճամբուն վրայ, իւրաքանչիւրին վրայ ձգելով հատիկ հատիկ, մաս առ մաս իր ստելին վրայի անասնիկներէն որոնք ժանտախտի համաճարակին ատեն ժանտախտին մանրէն կընեղայացնեն ու այս ամենքը կընէ բոլորովին անտարբեր, անփոյթ և անհոգ կերպով, որպէս թէ իր պարասականութիւնը եղած ըլլար :

Ի զուր եղած են ամէն հալածանք բնաջինջ ընելու այս անտուճը, միշտ կը ծնին, կը բազմապատակուին անհաւատալի տրագութեամբ և երբ շաանան խումբ խումբ գաղթականութեան կեղքն մինչեւ հեռաւոր երկիրներ, ինչպէս Հնդկաստանէն մինչեւ Եգիպտոս :

Փոթորիկէն չեն վախնար, ծովէն չեն բռնուիր, անցադրի պէտքը չեն ունեցած, իսկ շոգենաւի վարձքը ուտելը հաճոյք կը սեպեն :

Ծովուն մէջ, դաշտին մէջ, առնելու ներքեւ, հողին ծակերուն մէջ ամէն տեղ տուն ունին, անկողին կը շինեն և օրերով կը գիշերեն, բաւական է որ փափաքնուն հասնին, կը ծե՛լ, վնասե՛լ :

Մուկին ի՛նչ բարիծաղիկ արարած մը ըլլալը ամենէն առաջ Եգիպտոսցիք հասկցած են : Փարաւոնի այդ երկրին մէջ ուր փարաւոնի

մուկը կը սիրուի, ժանտախտի նշանաբանն է այն :

Թէրէի աղօթասանդիին մէջ աւերուածի չստուածը ներկայացուած է ձեռքը մուկ մը բռնած :

Պատմութիւնը՝ որ առանց առասպելական կողմեր ունենալու պատմութիւն չկրնար ըլլալ, թէև այս մասին նուազ երեւակայական, մեզ կը հաղորդէ թէ մուկերուն վարակողի դերը այնքան հին է որքան նոյնինքն ժանտախտը՝ փթած պատերազմի մը ժամանակ, բազմաթիւ վարակեալ մուկեր արձակելով իր թշնամիին՝ Ասորեստանցուց բանակին վրայ, յաջողած է կոտորած ձգել զըրբերուն մէջ և մէկ գիշերուան միջոցին 180,000 հոգիի մահուան պատճառ ըլլալ : Եթէ մէկ կողմանէ մարդուն անբարոյականութեան և անխղճութեան վրայ որոշ գաղտնիք մը ունեցած չըլլայինք և միւս կողմանէ մուկին այս դերը ճշմարիտ եղած չըլլար, պիտի վարանէինք հաւատարմ աշպխոսի աւանդութեան մը, սակայն ցաւալի է ըսել թէ եղբուրթիւնը կասկած չի վերցնել և մուկերը մահացու գործիք մը ընելը տարբերութիւն չունի երբեք այսօրուան քաղաքակիրթ մարդուն Ախտիթը, Մէլինիթը, Տըմ-տըմը և ստոնց նման նիւթեր գործածելէն :

Պատմութեան այս կարգի ախտը էջերուն քով երբեմն կուգան կը խառնուին այնպիսի զարմանալի

պարագաներ որոնք պահ մը փոթփոթած և զայրացած դէմքերու վրայ ծիծաղ կը բերեն :

Անոնցմէ մին է այն ապշեցուցիչ դատը զոր միջին դարու մէջ, 1522 թուականին Օթէնի բնակիչները վարած են քաղաքը վտանգաւոր հիւանդութիւնով մը վարակող գաղթական մուկերու լէգէոնի մը դէմ, ինչպէս կը պատմէ Տաքթ. Արմէլ Երմէկ ուսումնասիրութեան մէջ :

Օթէնցիք, միամիտ կամ շատ ինքնատիպ մարդեր, դատը կսկըսին. կառավարութիւնը չի կրնար մերժել և իբրև պարականութիւն պաշտօնական փաստաբան մը կը կարգէ, իրաւագէտ Շասավէն, իբրև պաշտպան մուկերուն :

Առաջին նիստին մէջ Շասավէ կառարկէ թէ մուկերէն շատերը դաշտին մէջ արդէն ցրուած ըլլալուն, դատական հրաւերը սնունդ մէն մէկուն՝ այսինքն իր յաճախորդներէն բոլորին ալ չէ հաղորդուած, ինչ որ օրինական թերութիւն մը կը ներկայացնէ, հետեւաբար հարկ է որ ամէն թաղի քարտղիչներ իրենց բեմէն հրապարակային աղբարարութիւններ ընեն և անկից յետոյ միայն դատը սկսի :

Դատարանը օրինական կը գտնէ Շասավէի գիտողութիւնը, ազդարարութիւնը ընել կուտայ և դատը կը անէ ամբողջ 8 տարիներ, երկար՝ այսօրուան դատերուն չափ :

Տաքթ. Արմէլ դատին ելքը դրժ-

բախտաբար չինչանակեր, հետեւաբար ապագայ սերունդը չի կրնար դաս մը քաղել անկից. միայն հետաքրքրաշարժ էր գիտնալ թէ որո՞նք վճարած են արդեօք դատական ծախքերը :

Այս մէկ քանի հին պատմութիւններէն յետոյ անցնինք այժմ մուկերէն ազատուելու մէկ երկու միջոցներուն վրայ խօսիլ :

Պօլսեցի բժիշկ մը՝ Տօքթ. Բիէռ Աբէրի կառաջարկէ ածխային թթուում (acide carbonique) սպաննել մուկերը, մանաւանդ նաւերու մէջ : Տօքթ. Աբէրի նկատելով որ ածխային թթուն միակ կազն է որ օդէն աւելի ծանր ըլլալուն՝ գետնին երեսը կը մնայ, որուն մէջ մամը կը մարի թթուածինի չգոյութեան պատճառաւ և նկատելով որ Բուցցօրի անուանի քարայրին մէջ շուները շնչահեղձ կըլլան ածխային թթու գտնուելուն համար, կառուարկէ մուկերու կոտորածներ կազմակերպել միեւնոյն կազով :

Ածխային թթու հայթայթելու համար պարզ միջոցներ պակաս չեն կըսէ, զոր օրինակ, ամանի մը մէջ դնելով մարմարի կտոր մը և վրան լեցնելով ջրախառն acide chlorhydrique կամ sulfurique, կազը կըսկսի գոյանալ և իր խտութեան պատճառաւ գետնին երեսէն հեռոցհեռէ կը վանէ օդը և ինքը անոր տեղը կը բռնէ թանձր խու մը ձեւացնելով :

Մուկերը որոնք գետնին երեսը

կը պարտին ու ճանճերուն պէս չեն, շնչելով այդ կազը կը խղդուին : Միայն խնդիր է գիտնալ թէ մուկերը ածխային կազին հեռոցհեռէ գոյանալը կուահելով, պիտի սպասե՞ն մինչեւ վերջը և անմիջապէս չի՞ պիտի խոյս տան :


Ուրիշ միջոց մըն ալ Բասթօրեան հաստատութենէն Տօքթ. Տանից կառաջարկէ, այն է մշակել միայն մուկերուն համար վնասակար մանրէներ և զանոնք կերցնել ու անլիքներու կամ հացի միջոցաւ : Եւ որովհետեւ մուկերը սովորութիւն ունին իրենց ստակած ընկերներն ուտել ալ, հետեւաբար միջոցը աւելի լայն պայմաններու մէջ կը յաջողի և կոտորածը ապահով կըլլայ :

Տօքթ. Տանից իր այս գրութիւնը գործադրած ըլլալով թէ՛ դաշտի և թէ՛ կոյուղիի մուկերու վրայ, արդիւնքը գոհացուցիչ գտած է, հետեւապէս յանձնարարելի :

Խնդիրը մանրէն գտնելու և մշակելուն մէջն է, ինչ որ կարելի չէ ամէն երկիրներու համար. կը մնայ յանձնարարել Եւրոպայէն :

Ուրեմն այսուհետեւ այդ յանձնարարութիւնն ալ ընելու բաղդը պիտի ունենանք և Եւրոպա մեզի ոչ միայն ազատիչ շիճուկներ պիտի հասցնէ հապա նոյիսկ մուկ սպաննող մանրէներ . . . ի՛նչ յառաջդիմութիւն :

Հապա կատունե՛րը :



ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 22 թուականով միտինոսար մը կը գրէ Վանէն .

Հունձքը առատ պիտի ըլլայ եթէ ուզուած ատենը երկու երեք հեղ անձրեւ տեղայ : Այն ատեն պիտի ազատինք ծայրայեղ թշուառութեան այս շրջանէն որ աւերեց բազմաթիւ ընտանիքներ և որ շատ տեղեր չքաւորներու մահուան պատճառ եղաւ :

Մինչեւ այն ժամանակ անօթութիւնը պիտի շարունակէ զոհեր ընել, և մենք անդուլ անդադար աղքատներու թախանձագին խնդրանքներուն ենթակայ պիտի ըլլանք : Դեռ անցեալները, մատուռէն դուրս ելլելու պահուս, հինգ տղաք ոտքերուս փաթուռեցան, արցունք թափելով : Հայրերնին, խեղճ ամէկոտ մարդ որ չի կրնար ոչ մուրալ, ոչ տունը ծախել՝ զնորգ չգտնելուն, վրաս կը զրկէր զանոնք գութս շարժելու համար : Այս կարգի դէպքեր օրուան ամէն ժամերուն տեղի կուսնենան :

Զատիկին մօտ 2600 ֆրանք բաշխեցի Հ. Անտոն Ճնս ոյեանի հետ : Այս գումարը ահագին բան է մեզ համար . իսկ կեցող ու հեռագհետէ ծանրացող կարօտութեանց հետ բաղդատմամբ աննշան գումար մը :

Արդարեւ, ցորենի չափը որ պահ մը 55 զրուշի իջած էր նորէն 75-


80 ի բարձրացաւ, և բնաւ յուսալի չէ որ հունձքէն աւաջ գինը նորէն իջնայ : Վաստակի միջոցները շատոնց ի վեր սպառած են և շահերը գրեթէ ոչինչ : Ամենէն աւելի գութս շարժող ընտանիքները անոնք են որ չեն կրնար փողոց իջնալ ու հոն ձեռք կարկառել : Շատեր կան որ խիստ շատ անգամ դաշտերէ ժողված խոտերովսին կը սնանին :

Գեղերուն վիճակը ա՛լ աւելի ծանր է : Անօթութիւնը կը քչէ կը տանի խեղճեր ու ամենէն սրբատամբմը տուամները տեղի կուսնենան հոն : Վերջերս, ընտանիք մը, ունեցածը չունեցածը հասցունելէ յետոյ, մէկը չի գիտնալով որ իրեն օգնէ, ամրապէս կը փակուի իր տան մէջ, այր, կին, տղաք, և մէնքն ալ կը պառկին՝ յաւիտենականութեան մէջ միայն արթննալու մտադրութեամբ :

Երկու օր կանցնի, և մահը զանոնք կը շոշափէր արդէն իր չարաչուք թեւերովը, երբ կերթան կիւմացնեն անոնց թէ 70 ֆրանք հասած էր իրենց Պօլսէն : Մինչեւ անոնց քովը հասնելու համար հարկ կըլլայ կոտորել դուռը զոր խեղճերը ուժ չունէին բանալու : Ո՛րքան նուազ բախտաւորներ կան որոնք դերեզմանափորին այցը միայն կրնա գունին :

Ինձի սքանչացում պատճառողը սա է մանաւանդ որ այս դժբախտները կը տառապին, կը մեռնին՝

իրենց խրճիթին մէջ առանձնացած, առանց ճիշ մը արձակելու, առանց տրանջալու գրեթէ: Երանի թէ իրենց համբերութիւնը, իրենց քաղցրութիւնը, իրենց հնազանդութիւնը զիրենք զարնող ձեռքին՝ վերջապէս զինսթափ ընեն Աստուծոյ արդարութիւնը:



ՄՈՒՐԱՅԻԿ ԷՄՈՆ ^(*)

(Պատահական Յիւսուած)

Երկայնահասակ ու յաղթանդամ, Կ...ցի ծերուկ մըն էր Էմոն, որուն ձուարդ ու խորշոմուտ գէմքը պատած էր միշտ մուսյլ թախիծով մը. կապոյտ ու մելամաղձոտ աչքերը լուռ տառապողի մը փոթորկոտ ներքնաշխարհին ցոլարձակումն էին: Ամէն իրիկուն, գլուխը կքած ուսերուն մէջ, ձեռքէն տոպրակ մը կախուած, կը պտըտէր դուռնէ դուռ պատառ մը չոր հաց մուրալու համար: Երբեմն մեր դրան առջեւ նստելով՝ կը խորասուզուէր ժամերով մտածումներու մէջ, ու մէկէնիմէկ՝ մղձառանջալից քունէ արթնցողի մը պէս՝ կը թոթուէր տենդոտ ցնցումէ մը, որուն կը յաջորդէր անզուսպ վրէժի խեղդուկ հառաչ մը:

Այս մարդը զիս շատ հետաքրքրեց. ուզեցի գիտնալ իր ցաւերը՝ միսթաբելու համար զինքը: Այս նպատակով մտերմացայ Էմոնին հետ, ու պատմել տուի ինչ որ իրեն այսօրան խոկալ

(*) Հայկ. կրթարանի տարեկան քննութեանց մէջ բարձ. դասընթացքի աշակերտներուն կարգացած երկու լաւագոյն գրուածները պիտի հրատարակուին. առաջինն է ներկայ պատկերը:

կուտար: Լեզուն թէեւ ո՛չ հասկնալի ամբողջովին, բայց կըցի ըմբռնել թէ զինքը տխրեցնողը ո՛չ ցամաք հաց ուտելն էր, ո՛չ տախտակի վրայ ու երբեմն ալ բացօթեայ պառկիլը եւ ո՛չ իսկ պատուած հագուստ հագնիլը, այլ կանխահաս ծերութիւնը, զոր անյաղթելի խոչընդոտ մը կը նկատէր իր առջեւ եւ որուն պատճառաւ չպիտի կրնար լայնօրէն լուծել իրեն բաժին ինկած վրէժը այն մահերուն, այն ավերումներուն, այն լլկումներուն, որոնք ամէն օր տեղի կունենան Հայաստանի խորերը. «Միակ միսթարութիւն մը եթէ ունիմ, կըսէր, սա է որ զաւակս յաջորդած է ինծի, իբրև քաջ հերոսը Կ...ի, ու միակ փափաքս է չլսել զաւկիս մահը»:

Այս ամէնը լսելէս յետոյ բնական յարգանք մը ծնաւ մէջս այս ծերուկին հանդէպ. տեսայ կոշտ ու կոպիտ ցնցոտիներուն տակ պահուած վեհ հոգի մը, ազգին խղճալի վիճակին համար անկեղծօրէն տառապող, ու ճշմարիտ անձնուէր մը հայրենիքին համար: Իր խանդավառ սրտէն դուրս կը ժաթ քէին անէծքի ամենէն կեզիչ հեղեղները մեր սեւ ճակատագրին վրայ: Ու այսպէս իր տարապայման եռանդէն ոգեսպառ, կը մեկնէր քովէս դանդաղ կոտ ու կորաքամակ:

Ամառ օր մը, մեր խանութին դիմացը գտնուող պանդոկը իջաւանեցին Կ...էն եկող ճամբորդներ, որոնցմէ մէկը մօտենալով ինծի հարցուց թէ կը ճանչնամ տեղւոյս թաղերը պտրտող ծեր մուրացիկ մը: Հասկնալով որ Էմոն կը փնտռէր, խոստացայ անոր մօտ տանիլ զինքը իրիկուան: Իմ ուրախութիւնս չափ չունէր, նկատելով որ Էմոնին մեծ բարիք մը ըրած պիտի ըլլայի:

Ճամբորդը՝ հաղիւ մօտեցաւ Էմոյին, քաջ ըսելով համբուրեց ձեռքը. Էմոն փոխադարձ համբոյր մը գրօջմելով անոր ձակաին վրայ, թաց աչքերով հարցուց իսկոյն թէ ի՞նչ լուր ունէր դաւկէն: Ճամբորդին խօսելու վարանուժը տեսնելով ես հեռացայ քովերնուն:

Յաջորդ օրը տեսայ Էմոն իր սովորական հանգստեան տեղը, մեր դրանը առջեւ, ուր կուլար դառնապէս: Հասկցայ այն ատեն թէ տխուր էին մուրացիկին առած լուրերը: Կը ջանայի մխիթարել զինքը, բայց ի զուր. անիկա չէր լար իրազուէն մահուանը վրայ, այլ կողբար այն արիւնները, որոնք նոր թափուած էին Կ...ի շրջակաները եւ որոնց վրէժը անլուծ պիտի մնար իր տղուն մահուամբը:

Ա՛լ Էմոն սկսաւ կեանքը ատել, քանի որ իր էութիւնը վրդովող ըզձանքները անկատար կը մնային. սեւ մահը փրկիչ կանուանէր, քանի որ իրեն համար աշխարհքը ա՛լ խաւարչուտ զնդան մըն էր: Վշտին կատաղի դառնութենէն արցունքներն ալ ցամքեցան, ու ատեն ատեն սպիտակ մազի փունջեր կը թափէին իր գիւղը: Արեան ծարաւը կ'ըմբոստացնէր զինքը նոյն իսկ Արարչին դէմ « որ, կըսէր, այսքան շուտ խլեց իմ երիտասարդութիւնս »:

Մութը կոխելուն մօտ մեղնեցաւ քովէս խեղճ ծերուկը, արցունքը աչքերուն մէջ քարացած, վշտէն ու կատաղութենէն գրեթէ ավիբերան:

Բայց այնուհետեւ ի զուր սպասեցի Էմոյին. կորսուած էր ան. ո՛չ ոք տեղեկութիւն ունէր անոր վրայ: Հայրը կորսնցնողի մը պէս կը փնտռէի զինքը թաղէ թաղ:

*
* *

Երեք օր էր յորմէ հետէ Էմոն կորսուած էր: Իրիկուն մը երեք ընկերներով պոռոյտի դացած էինք քաղաքին վերեւը գտնուող բերդը, ուր պատահամբ տեսանք Էմոն նստած երկու սեպածեւ ժայռերու մէջտեղ, ուր ջերմեռանդօրէն կաղօթէր անընդհատ. երբ քիչ մըն ալ մօտեցանք իրեն, հոն տեսանք խորան մը քարերով շինուած, վայրի ծաղիկներու փունջերով զարդարուն:

Բարեւեցի զինքը, բայց պատասխան չընդունեցայ. երբ թեւէն բռնեցի՝ այնպէս խոլոր մուրը ձեւով մը ինծի նայեցաւ որ չկրցանք քրքիջ մը զսպել:


Էմոն խնդեցած էր. զիս չէր ճանչնար: Հոն եկած էր, երեք օր ապաշխարելէ յետոյ, անձնասպան ըլլալու՝ ինքզինքը ապառաժներէն վար նստելով:

Մեծ գժուարութեամբ համոզեցինք խեղճ ծերուկը, ու բերդէն վար իջեցընելով տարինք եկեղեցիին բակը:

Երկու օր յետոյ իմացանք թէ Էմոն մեռեր է: Այցելեցի այդ գիւղացիին գերեզմանը, աղուոր փունջեր կազմեցի՝ սղալի արցունքներ թափելով, ու զանոնք զետեղելէս յետոյ գլխուն վերեւ՝ ըսի.

— Քեզ չի պիտի մոռնամ երբէք, սիրելի Էմո, վասն զի դո՛ւն վառեցիք իմ մէջս հայրենասիրական զգացումը, դո՛ւն եղար առաջին անգամ ինձ ներշնչողը ազատութեան ոգին. միշտ յարգանքով պիտի յիշէմ քեզ, երանելի ծերուկ:

ԳՐԻԳՈՐ ՄՕՁԵԱՆ



ՍԻՐՈՅ ՁՈՋԵՐ

Ով որ իր ոտքը դրած է դատարանի մը սեմէն ներս, զգացած է ներկայութիւնը այն վեհ, ահաւոր բաներուն, որոնք կը կոչուին Օրէնք եւ Արդարութիւն:

Գատարանը թատերասրահ մըն է ուր ամէն օր իրական, բայց իրական կեանքի աներեւակայելի ողբերգութիւններ կը ներկայացուին եւ ուր սակայն ունկնդիրները այնքան անագորոյն են որքան զերասանները անզգած. հոն ներկայ հանդիսականին գէմբին վրայ հիացում գրօջմուած չէ, այլ խստութիւն: Հոն՝ տռամին հերոսները չեն ծափահարուիր, այլ զազանացած ամբոխ մը պատրաստ է զանոնք յօշոտելու:

Անւատարակ այս տեսակ բազմութիւն մը գտանք Շ. քաղաքի նահանգային դատարանի ատենական սրահին մէջ ուր գացեր էինք ունկնդրելու դատի մը որ օրերէ ի վեր խօսակցութեան նիւթ դարձած էր:

Ունկնդիրներու յատկացուած նրատարաններուն վրայ խոնուած թախծոտ բազմութիւն մը ուշադրութիւնը սաստիկ լարած՝ մէկ մարդու պէս նայուածքը սրահին խորը միւս մասէն:

Յած վանդակորմով մը սրահէն բաժնուած անկեան մէջ կանանչ ասուիներով ծածկուած սեղաններու առջեւ նստած էին երեք սեւազգեստ դատաւորներ: Աջ կողմը ընդ. գատախազը եւ ձախ կողմը գատարանի քարտուղարը իրենց թուղթերուն վրայ ծրուած, կարծես թաղուած էին անոնց մէջ:

Սեւազգեստ դատաւորներու աթոռներու կտին շարուած էին հինգ ա-

թոռներ եւս, որոնց վրայ դատաւորներու լրջութեամբ նստած էին հինգ հատ հաստակազմ գիւղացիներ, որոնցմէ մէկը չքնանալու համար սաստիկ ճիգեր կը թափէր. երգուեալ դատաւորներն էին ասոնք:

Վանդակորմին մօտ, սրահին մէջ, երկայն նստարանի մը մէկ ծայրը նրատած էր 27-29 տարեկան նրբահասակ, տփղոյն գէմբով, սեւաչոււի գեղջկուհի մը, իսկ միւս ծայրը բարձրահասակ, 30-35 տարեկան, առողջ բայց գունատ մարդ մը, եւ ասոնց կտին ոտքի վրայ կեցած էին երեք ոտիկաններ՝ աչքերնին յառած իրենց հսկողութեան յանձնուած երկու բանտարկեալներուն վրայ:

Երբ ներս մասնք, նախագահը նոր աւարտած էր ընդ. գատախազի ամբաստանագրին ընթերցումը եւ զառնալով գեղեցկագէմ կնոջ, հարցուց.

— Մարիյքա՛, քու մասիդ եղած ամբաստանութիւնները լսեցիր, ի՞նչ պիտի ըսես ինքզինքդ արդարացնելու համար:

Մարիյքան նախ մէկ երկու վայրկեան նախագահին երեսը նայեցաւ եւ յետոյ գողգալով տփր վրայ ելաւ, իր շուրջը նայեցաւ եւ հաղիւ լսելի ձայնով մը ըսաւ.

— Ես յանցանք չունիմ, Պ. դատաւոր, ես ամուսինս չէի սիրեր: Սիրեցի ուրիշ

Չկրցաւ խօսքը լմնցնել, նստարանին միւս ծայրը գտնուող գեղացիին նայեցաւ, երկու ձեռքերով երեսը ծածկեց եւ նստարանին վրայ իյնալով, սկսաւ հեծկտալ:

— Իսկ դու, Նիքօլա, ի՞նչ գիտես այս սպաննութեան մասին:

— Ոչինչ, պարոն դատաւոր, այն մարդը իմ բարեկամս էր եւ ես շատ

ցաւեցայ երբ իմացայ թէ սպաննուած է

Նախագահը յայտնեց թէ վկաներու հարցաքննութիւնը պիտի կատարուի եւ 15 ի չափ վկաներ մէկիկ մէկիկ ներս կանչուելով՝ ամբողջ առամը ծայրէ ի ծայր պատմեցին:

*
* *

189 . . . Թուականին Ք. գիւղի բընակիչներէն Իվան Բէթրով երկրորդ անգամ ամուսնացաւ նոյն գիւղացի այրի Մարիյքային հետ: Իրենց ամուսնութեան առաջին տարիները երջանիկ էին, բայց յետոյ Մարիյքա կամաց կամաց պաղեցաւ իր ամուսնէն եւ սկսաւ փնտուել ուրիշ մը, որ յագուրդ տար իր սրտին յորդառատ ցանկութիւններուն:

Օր մը երբ Մարիյքայի ամուսինը բացակայ էր գիւղէն, կինը իր տունը հրաւիրեց իրենց դրացի Նիքօլան, ալիւրի պարկ մը վերցնելու պատըրուակով եւ հոն ծունկի վրայ խոստովանեցաւ իր սէրը: Յայտնեց իր սընուցած զգացումները անոր մասին եւ ունեցած ատելութիւնը իր օրինաւոր ամուսնոյն դէմ: Այդ վայրկեանէն սիրային գաղտնի եւ սերտ յարաբերութիւն մը հաստատուեցաւ երկու դրացիներու մէջ: Ու սիրոյ այդ փոքրիկ կայծը արծարծուելով աւերիչ հրդեհ մը դարձաւ, եւ երկու սիրահարները այլեւս չէին կրնար դոհանալ սքօղուած սիրոյ մը գողունի հեշտանքովը միայն: Մարիյքայի ամուսինը անտանելի խոչընդոտ մըն էր երկու սիրողներուն ճամբուն վրայ: Ի՞նչ ընելու էր ուրեմն — ոչնչացնել զայն:

Եւ իրիկուն մը, կէս գիշերուն հա-

զիւ մէկ ժամ մնացած, երբ ամբողջ գիւղացիք դաշտային ծանր աշխատութիւններէն յոգնած խոր քունի մը մէջ կը հանգստանային, Մարիյքան իր տան բակին դրանը մէջ անշարժ կը սպասէր: Երկու տարփաւորները որոշած էին նոյն գիշերն իսկ արգելքը մէջտեղէն վերցնել: Յանկարծ փողոցին ծայրէն մարդու մը ստուերը երեւնալով արագ քայլերով Մարիյքային մօտեցաւ: Երկուքը միասին մտան Մարիյքայի ամուսնոյն սենեակը եւ հոն, կանխաւ պատրաստուած կացինով մը, քնացող զոհին գլխուն եւ վզին այնպիսի հարուածներ տրուեցան որ անիկա կռնկի վրայ տարածուելով սկսաւ խորդալ: Նիքօլան իր զոհին վրայ իյնալով թաշկինակը բերնին մէջ դրաւ որ ձայն չհանէ: Ու քառորդ ժամ վերջը երբ համոզուեցան թէ այլեւս մնած է, երկուքը միասին դիակը հագուեցրնելով բակին մէջտեղը տարածեցին: Ախոռէն ձիերը դուրս հանելով գիտկին շուրջը պտըտցուցին քանի մը անգամ եւ ազատ թող տուին: Յետոյ սենեակին մէջի արիւնը մաքրեցին ու կասկածելի առարկաները ախոռին մէջ պահեցին: Հետեւեալ օրը, առաւօտեան դէմ, Մարիյքայի աղաղակին վրայ դրացիները հաւաքուելով իմաց տրուեցաւ ոստիկանութեան: Դիակին քննութենէն յայտնուեցաւ որ ամբողջ մարմինը ծածկուած էր սեւ բիծերով եւ գլուխը յօշոտուած:

Կատարուած քննութիւններէն երեւան ելաւ որ մարդը ձիերու ոսքերուն տակ կոխկոտուած չէր, այլ սուր կացինի հարուածներով մորթուած:

Անմիջապէս ձերբակալուեցան Մարիյքան եւ իր սիրահարը:

*
* *

Երբ վերջացան վկաներու հարցա-
քննութիւնները՝ խօսք առաւ ընդ-
դատախազը:

— Պ. դատաւորներ եւ երդուեալ
դատաւորներ, այսօր մեր քննութեան
յանձնուած է դատ մը, որ այնչափ
հետաքրքրական չէ իր կազմուածքովը,
իւր արդիւնքովը, որչափ իր պատճա-
ռովը: Անիկա մեծ նշանակութիւն
ունի ոչ միայն իրաւագիտական, այլ
եւ բարոյական տեսակէտով: Եթէ այս-
օրինակ ոճիւր մը քաղաքի մը մէջ,
աարբեր պայմաններու ներքեւ ապրող
ընկերութեան մը մէջ գործուած ըւ-
լար, աւելի սովորական բան մը պի-
տի համարուէր մեզ համար, բայց
գիւղի մը մէջ, ուր մարդիկ առտուը-
նէ մինչեւ իրիկուն ամենամասն
աշ-
խատանքներով զբաղած են, ընդհան-
րապէս քիչ ժամանակ կը գտնեն մը-
տածելու համար այս տեսակ բաներու
վրայ:

«Սակայն մեզ համար ամենէն կարե-
ւորը սա է թէ արդեօք այս մարդաս-
պանութիւնը գործուած է մեր առջեւ
գտնուող երկու ամբաստանեալներ
ընդէն ձեռքով եւ թէ արդեօք անոնք
սկիզբէն մինչեւ վերջը միասին, գի-
տակցաբար եւ կանխամտածմամբ գոր-
ծեր էին ոճիւրը »:

Ու դատախազը ամբողջ ժամ ու կէս
խօսելով ցոյց տուաւ թէ վկաներու
յայտնութիւններով կատարելապէս
հաստատուած էր մեղադրեալներուն
յանցաւորութիւնը:

Յետոյ խօսեցաւ պաշտպան փաստա-
բանը ժամերով, հիանալի պերճախօ-
սութեամբ մը, ցոյց տալու համար թէ
մեղադրեալները դատապարտող ո եւ է
շօշափելի ապացոյց չի կար:

«Այժմ տեսնենք, շարունակեց, թէ
որո՞նք են մեր քննած դատին բարո-
յական չարժանութիւնները: Նախ պէտք
է ըսել թէ այս բնաւորութիւնը ու-
նեցող բոլոր չարագործութիւնները,
առեւանգումները, բռնաբարութիւն-
ները կը վերաբերին մարդու անաս-
նական ամենակատաղի կրքերուն.
գողութիւնը կրնայ կատարուիլ պա-
ղարիւնութեամբ, սակայն ասոր նը-
ման դատերուն մէջ մենք մեր զէմը
ունինք մարդուն անասնական յատ-
կութիւնները միայն...»

«Վկաները ձեր առջեւ հաստատեցին
թէ Նիքօլա եւ Մարիյքա ամիսներէ
ի վեր կը սիրէին զիրար. անոնք եր-
կուքն ալ իրենց սրտերուն մէջ կը
սնուցանէին սէր մը զոր ստիպուած
էին գաղտնի պահել, վասն զի կինը
ամուսնացած էր: Եւ ատոր համար
անոնց սէրը սովորականէն աւելի ա-
րագութեամբ սկսաւ աճիլ: Արգիլ-
ուած ծառին պտուղը քաղցր է: Իսկ
միւս կողմէն կնոջ գլխուն մէջ սկսաւ
ուրիշ մտածում մը զարգանալ. ուզեց
իւր սիրածն իր մօտը ունենալ ցմահ:
Սկսաւ ատել իր օրինաւոր ամուսինը:
Արդ, Պ. դատաւորներ եւ երդուեալ
դատաւորներ, ի՞նչ կըսպասէք գիւղա-
ցի պարզ կնիկէ մը, որուն դաստիա-
րակութիւնը կասկածելի էր, որ ո եւ
է կըթուութիւն առած չէր եւ որ գա-
զանային կրքի մը անգիտակից խա-
ղալիկն էր դարձած: Որոչեց վերջա-
պէս սպաննել իր ամուսինը, բայց
կամք պէտք էր ասոր համար, կամք
զոր գտաւ իր սիրեցեակին քով: Եւ
երեւակայեցէք Նիքօլայի կացութիւ-
նը երբ լսեց այդ տեսակ առաջար-
կութիւն մը իր սիրուհիին բերնէն:
Երկու կրակին մէջը կը մնայ. կա՛մ
պէտքէր մարդասպան մը ըլլալ սիրոյ

հեշտութիւնը չկորսնցնելու համար, կամ լսել իր սիրուհւոյն անվերջ նախատինքները. «կորսուէ՛ գնա՛, չեմ ուզեր քեզ, դուն վախկոտ մը, անարժան մարդ մըն ես...» Ինչ որ մահուան չափ ծանր էր սիրող մարդու մը համար:

«Եւ այսպէս եթէ նոյն իսկ ընդունինք թէ մեր առջեւ կեցող երկու ամբաստանաւորները միասին գործած են ոճիրը, միեւնոյն փամանակ պէտք է խոստովանինք թէ անոնք սիրով կուրցած անասուններ էին, անոնք կորսնցուցած էին իրենց կամքին բացարձակ աէրն ըլլալու գիտակցութիւնը: Իսկ անգամ մը որ խոստովանինք ասիկա, պարտաւոր ենք ընդունիլ թէ յանցանքը մեղմացնող պարագաներ են անոնք:

«Սիրով գինովցած մարդիկ շատ դուրութեամբ նոյն իսկ ինքնասպանութեան կը դիմեն, թոյն կը խմեն, մահամարտներու մէջ զիրար կը յօշոտեն, վայրի գազաններու նման իրարու գլուխ կը ջախջախեն, եւ բոլոր այս բաներուն համար, մարդկային բնաւորութեան այս տկարութեանը համար միայն այս թշուառ կինը եւ այս թշուառ մա՞րդն են յանցաւոր: Աշխարհի սկիզբէն ի վեր մարդկութեան համար երկու բան միայն գոյութիւն ունեցած է. հացի կոխ եւ սիրոյ կոխ: Ու Ադամ իսկ, որ Ասրոճոյ պատկերին համաձայն ստեղծուած էր, չկարողացաւ գիմադրել Եւայի հրապուրանքին եւ կանգ չառաւ նոյն իսկ գրախտը կորսնցնելու վտանգին առջեւ: Այս օրինակը յըստակ հայելի մը չէ՞ մարդկային հոգւոյն համար: Մենք ալ Ադամի եւ Եւայի զաւակները չե՞նք. ամենքս ալ

մեր հոգւոյն մէջ չե՞նք կրկն անոնց սկզբնական մեղքը: Իրաւունք ունի՞նք ուրեմն այդ մեղքի բոլոր ծանրութիւնը բռնաւորել այս երկու թշուառներու կռնակին վրայ: Ո՞վ կրնայ կասեցնել սիրոյ զգացումները. ո՞վ կրնայ չհիանալ, չյափշտակուիլ գեղեցիկ պատկերի մը առջեւ. կարելի՞ է դատապարտել մարդը ասոր համար:

«Ես ալ Պ. դատախազին հետ միասին կը գոչեմ՝, արդարութիւն . . . արդար եղէ՛ք, Պ. դատաւորներ, եթէ կուզէք երկրին բարի օրինակ մը, աղուոր դաս մը տալ՝ ձեռք մեկնեցէք տղմին մէկ խրած սա երկու թշուառներուն եւ դուրս քաշեցէք զանոնք:»

Երկու ժամ ետքը դատաւորները սրահ վերադարձան. նախագահը կարգաց տրուած վճիռը, որուն համաձայն Նիքօլա եւ Մարիլթա կը դատապարտուէին մահուան:

*
* *

Դատաւարութեան օրէն 2-3 ամիս վերջը տեղական թերթի մը մէջ կարգացի թէ բարձրագոյն հրովարտակով մը մահուան վճիռը փոխուած էր ցրման բանտարկութեան:

Եւ այժմ անոնք, երկու տարիաւորները, գեռ բանտն են ու մինչեւ այսօր կը սիրեն զիրար:

ՏԻԳՐԱՆ ԱՃԻՄԵԱՆ



Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Կ

Թայսկ կիմանայ Պուլէն թէ էնիզ բաշա կուտակալ նշանակուած է Պատրայի : Անիկայ ան արիւնարբու սրիկան է որ Մուշի կոտորածը կազմակերպեց Սուլթանին հրամանովը : Անկից ի վեր պաշտօնանկ եղած էր և դեսպանները միշտ կ'ընդգրկմանային անոր կուտակալ անուանումին : Հիմակ որ Եւրոպայի ուշագրութիւնը Չինու կողմը դարձած է , Սուլթանը իր գազանային բնագրներուն մէջ սկսած է քիչ շատ ազատօրէն շարժիլ : Երբ թերթը կ'ըսէ թէ Սուլթան Համիտի համակրութիւնը չինացիներուն կողմն է , մանաւանդ Պոքսէրներուն որոնք շատ մեծ նմանութիւն ունին իր սիրուն քերտերուն հետ : Համիտ արդեօք ս'ըբան կը փափաքի վարձել չինացիներու այդ արիւնկըզակ ջոյիւրները , որոնք մարդ փուրտերու արհեստին մէջ այնքան փորձառու ու ճարպիկ կերեւնան :

— Կիպրոսի որբանոցը մեզ զրկած է իր Գ. տարեշրջանի տեղեկագիրը , որուն համեմատ որբանոցը ունի իբր երեսունըհինգ ուսանող , որոնցմէ 22ը ճրիապէս կը խնամուին հաստատութեան մէջ : Տնօրէն խորհրդի տեղեկագրէն կերեւայ թէ մէկ տարուան միջոցին 350 անդլ. ոսկի ծախուած է 36 ուսանողի համար :

— Վառնայի Հայկական կրթա-

րանի տարեկան հարցաքննութիւնները տեղի ունեցան յոժող կերպով : Յուլիս 2 կիրակի օրը տեղւոյս Սաէաինէնի սրահին մէջ տեղի ունեցաւ դպրոցական շատ սիրուն հանդէս մը : Վարժարանին երեք շրջ սաները ներկայացուցին Պարսեանի Մեծապատիւ Մուրացկաններէն գեղեցիկ հատուածներ : Հայ սրբերու մասին գուշար մեծախօսութենէ մը ետք , զոր արտասանեց փոքր օրիորդ մը , վարժարանին սաները հանդանակութիւն կատարեցին հանդիսականներուն մէջ , ու 46.75 Քր. հասոյթ գոյացաւ , որ անօրէնութեան ձեռքով պիտի զըրկուի պատրիարքարան՝ որբերու յատկացուելու համար :

— Տեղւոյս Որբանոցը նամակ մը ուղղելով մեզ կը խնդրէ ծանուցանել թէ իր նախաձեռնութեամբ Ռուստուքի մէջ սրբախնամ յանձնաժողով մը և Շումլայի մէջ մասնաձեռն մը կազմուած են : Որբախնամը յոյս կը յայտնէ որ Պուլկարիոյ ուրիշ քաղաքներու ազգայիններն ալ նմանօրինակ զովելի կազմակերպութեանց պիտի ձեռնարկեն :

— Պուլոյ մէջ վերջին օրերու ձերբակալութիւնները շատցած են : Շարժում կրտէ թէ՛ կառավարութիւնը խնամալով որ կարապետ Տոքրամանեան և Զարեհ Քոչեան Պոլիս մտած են , համառոտ կը ձերբակալէ :

Отросоворные Н. Драгулевс

Печатница «Ориенталъ» — Варна.

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

« ՀԱՄԱԼՍԱՐԱՆ »-ի սնօրէնութիւնը կը խնդրէ մենէ ծանուցանել թէ ի մօտոյ պիտի հրատարակուին Համալսարանի 5րդ և 6րդ թիւերը միացած : Այդ զոյգ թիւին մէջ ամբողջ պրակ մը յատկացուած է Բարիզի արուեստահանդէսին , 12 շքեղ նկարներով : Համալսարան այսուհետեւ կը հրատարակուի իր սեպհական տպարանին մէջ , ուր կը տպուին հայերէն , ֆրանսերէն և այլ լեզուներով տպարանական աշխատութիւններ :

կը փութանք ծանուցանել խմբագրութեանս դիմող հայ որբերու յատկացեալ Բացառիկ թերթի բաժանորդներուն որ այն թերթի տպագրութիւնը աւարտած չէ դեռ . երբ աւարտի կը ծանուցանենք Բազմալէզով :

« ԲԱԶՄԱՎԷՊ »

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ Երաժշտական նօթերով հրատարակութեան առաջին պրակը ստացած ըլլալով ջերմապէս կը յանձնարարենք զայն մեր ընթերցողներուն :

Բաժնեդինն է վեց տետրը 32 ֆր. և հասցէն՝

DIRECTION DES CHANTS POPULAIRES ARMÉNIENS


5, Rue de Chateaudun, PARIS.

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

«Վ. Ա. Ռ. Ն. Ա.»

Երկրորդ քաղ, Շիրաչենսիա փողոց, (Մագալլը յեշմեի կից)



Կը սպագրուին հայերէն, պուլկարերէն, զաղղիերէն, յու
նարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեատմս, հասցէատմս,
հարսանեկան հրատիրագիր, ազդարարութիւն, նամակագրութիւն,
պահարան, մահազդ, վաճառականական ամէն տեսակ գործեր,
դերք, լրագիր, և այլն:

Գունաւոր և սևեղօձ գարգազործերու համար ամէն լեզուէ
ձոխ առուր եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ. ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻԻՆ

ԳԻՆԵԲԸ ՅՈՅԹ ԴԻԻԲԱՄԱՏՅԵԼԻ

Ուրիւ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նշու-
թեամբ եւ փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

ՎՊ
ՎՊ